

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի N 846-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

9 հոկտեմբերի 2014 թ.
N 1103-Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենաներին ներկայացվող պահանջները, կիրառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 26-ի N 1325-Ն ու 2005 թվականի հունիսի 1-ի N 946-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 846-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) N 1 հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի «թ» պարբերությունում «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության» բառերով.

2) N 2 հավելվածի՝

ա. 1-ին կետում «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեում» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունում» բառերով,

բ. 6-րդ կետից հանել «ՀՂՄ-ն գրանցվում է առևտրի կամ բնակչությանը ծառայությունների մատուցման օբյեկտի համար:» նախադասությունը,

գ. 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Նոր կամ այլ անձանցից ձեռք բերված ՀՂՄ-ն, երբ կիրառվում է միայն որպես հսկիչ-դրամարկղային մեքենա կամ միաժամանակ որպես հսկիչ-դրամարկղային մեքենա և էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվներ և (կամ) այլ հաշվարկային փաստաթղթեր դուրս գրող սարք, գրանցվում է հարկային մարմնի տեղեկատվական բազայում գրանցված՝ գործունեության իրականացման օբյեկտի վրա: Մեկ օբյեկտի վրա կարող են գրանցվել մեկից ավելի ՀՂՄ-ներ: Գործունեության այն օբյեկտներում, որոնք բնակչությանը ծառայությունների մատուցման կամ «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված առևտրի օբյեկտ կամ առևտրի իրականացման վայրի վաճառատեղ են հանդիսանում, գրանցված ՀՂՄ-ները կարող են կիրառվել որպես հսկիչ-դրամարկղային մեքենա կամ միաժամանակ որպես հսկիչ-դրամարկղային մեքենա և էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվներ և (կամ) այլ հաշվարկային փաստաթղթեր դուրս գրող սարք: ՀՂՄ-ի աշխատանքային ռեժիմը միաժամանակ որպես հսկիչ-դրամարկղային մեքենա և որպես էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվներ և (կամ) այլ հաշվարկային փաստաթղթեր դուրս գրող սարք՝ ապահովվում է հարկային մարմնի տեղեկատվական բազայի ՀՂՄ-ների կառավարման համակարգի միջոցով: Տրանսպորտային միջոցների մեջ (վրա) տեղադրված ՀՂՄ-ները կարող են կիրառվել միայն որպես էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվներ և (կամ) այլ հաշվարկային փաստաթղթեր (բացառությամբ ՀՂՄ կտրոնի) դուրս գրող սարք:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
փոխվարչապետ

Ա. Գևորգյան

13 հոկտեմբերի 2014 թ.
Երևան